

յաջողութեան իրացս, պաշտպանեցէ թոռին իւրում, եւ փութասցի առաքեցէ օգնութիւն ընդդէմ բարբարոսաց, շնորհելով ներողութիւն մեղաց՝ եկելոցն յօգնութիւն իւր:

Մակայն եւ ոչ զայս նուագ տեւեաց յերկար խաղաղութիւն տառապեալն Անտիոքայ. քանզի դօղեալ կայր կոմսն՝ ՚ի բերդն, որ էր յոյժ ամուր եւ դժուարըմբոնելի. եւ ոչ կարէր Լեւոն ընդ երկար դեգերել անտանօր, եւ ըստ օրինի արուեստին պաշարել եւ պնդեալ պահել, առ որ եւ մեծի բազմութեան զօրաց պէտք էին: Արդ ՚ի հեռանալ նորա յերկիր իւր՝ ուստուցեալ կոմսին յորջոյ անտի, եւ մոռացեալ զպարտս որդեգրութեանն եւ զհպատակութեանն եւ զմեծի սրբազան աստիճանի պատրիարքին, յաջողեաց դարձեալ դրժանօք յինքն դարձուցանել զՏաճարականսն եւ զայս վարձկանս, եւ նոքօք մարտուցեալ յաղթեաց քաղաքացեացն. կալաւ զհայրապետն եւ զերկոսին եղբօրորդիս նորին եւ էարկ ՚ի բանտ տառապանաց. կողոպտեաց եւ զսպասս սրբութեան եկեղեցեաց նորին, թող թէ զինչս հաւատարմաց Բրնձին տղայոյ, զոր զերծուցին նոքա տիրասիրաբար եւ հասուցին առ Լեւոն: Յայնժամ՝ ըստ օրինաց, կամ վաղագոյն եւս՝ ըստ մերոյ պատմչին, «արար պատրիարզն զնա (զկոմսն) ընդ բանիւ. եւ հրամայեաց ոչ հարկանել զանգակ, եւ ոչ մատուցանել պատարագ, եւ ոչ թաղել զմեռեալ. եւ նա ոչ հաւանեցաւ. ապա յետ ամենայնի յանդգնեալ՝ մխեաց զձեռն իւր ՚ի պատրիարքն եւ եղ յարգելանս, եւ նեղէր սովով եւ ծարաւով. եւ առաքէր առ նա եւ ասէր. Վկայեա վասն իմ՝ որ ես եմ իրաւամբք տէր Անտիոքայ, զի ազատեալ ապրեցցիս. եւ նա ոչ առ յանձն ամենեւին, մինչեւ մեռաւ յարգելանսն՝ ՚ի սովոյ եւ ՚ի ծարաւոյ. եւ ոչ խօսեցաւ սուտ: Եւ յայնմհետէ եղև խռովութիւն մեծ ընդ թագաւորն եւ ընդ բրինձն»: Փռանկ պատմիչն շարայարող Տիրացւոյն, (ԼԱ. Գ), ասէ, կերակուր չափաւոր տայր պատրիարքին, այլ ջուր ամենեւին ոչ, մինչեւ ստիպիլ նորա առ ծարաւոյ ըմպել զիւղ լապտերին եւ մեռանել:

Ժամանեաց դարձեալ գոյժն ՚ի դուռն Քահանայապետին, եւ վրդովեցոյց, զի մինչ նա ամենայն փութոյ պնդութեամբ ՚ի խաչակրութիւնն եւ յազատութիւն Երուսաղեմի ճեպէր եւ յորդորէր, ոչ դադարէին տագնապք յԱնտիոքայ. գրեաց անդրէն (՚ի 6 փեբր. 1207) առ պատրիարքն Երուսաղեմի՝ իբրև առ նուիրակ Ասորոց երկրի, ջանալ ամենայն իրօք իլել խաղաղել զխէթն՝ որ ընդ Լեւոն, (զոր *ամենասիրելի* որդի իւր կոչէ) եւ ընդ կոմսն եւ համախոհս նորին Տաճարականս. զերծուցանել մանաւանդ